

ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

(Սկզբի պահպանակի վրա գրված է վարդերի ներքևում)

Հայաստան
աշխարհ (աշխարհագրություն):

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Սկզբի պահպանակի կռնակում կպցված է տպագիր մի փոքրիկ թուղթ, հետևյալ արձանագրությամբ)

Նուէր
Մայր Աթոռ Ս. Էջմիածնին
Յակոբ Ս. Անասեանից
Երևան—1978 թ.:

№ 576
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿՈՐՆԹԱՑԻՈՑ
ԱՌԱՋԻՆ ԹՂԹԻՆ
(Ա. տետրակ)

Թերթերը՝ 93:— **Պրակները՝** 7, յուրաքանչյուրը 14-ական թերթից, բացի Ա՝ 12, Բ՝ 15 և Է՝ 10 թերթից են:— **Մեծությունը՝** 21.2×16.4×1 սմ.:— **Նյութը՝** հաստ թուղթ:— **Կազմը՝** սև թղթակազմ բարակ ընտվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում սեկական հաստարակ բաց կապտավուն թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա և բոլոր թղթերի կռնակի մասը դատարկ է, բացի 91բ, 92բ և 93բ էջերից:— **Տողերը՝** 19:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Շնորհք վարդապետ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Կ. Պոլսի հայոց Պատրիարք) :— **Ժամանակը՝** 1939 թ.:— **Վայրը՝** Երուսաղեմ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.—Մասն առաջին:
Ներածություն:
Թ. 3բ.—Ա. Ընդհանուր ներածություն:
Թ. 4ա.—Գլուխ Ա—Ընդհանուր տեսություն մը Պողոս Առաքեալի թուղթերու մասին:
Թ. 10ա.—Պատմություն հաստատման Կորնթոսի Եկեղեցիին:
Թ. 21ա.—Բ. Մասնաւոր ներածություն:
Թ. 22ա.—1. Վաւերականություն:
Թ. 33ա.—2. Շարժառիթը:
Թ. 34ա.—3. Տեղը:
4. Թուականը:
5. Վարդապետական ուսուցումը:
Թ. 35ա.—6. Գրական ընդհանուր յատկանիշներ:
Թ. 44ա.—Պարունակություն:
Մասն Առաջին:
Մասն Երկրորդ:
Թ. 45ա.—Բ. Հերձուածը (Առաջին խնդիր) :
Թ. 55ա.—Գլուխ Բ—Կիրարկում Ածոյ փրկելու մեթոտին:
Թ. 65ա.—Գլուխ Գ—Ս. Պողոսի քարոզությունը ի Կորնթոս:

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից, 1978 թվականի № № Ա-ից, Դ-ից, 1979 թվականի № № Բ-ից, Դ-ից, Զ—Է-ից, ԺԲ-ից, 1980 թվականի № № Բ—Գ-ից, Ը-ից, Ժ—ԺԲ-ից և 1981 թվականի № № Ա—Դ-ից, Է-ից, Թ—ԺԲ-ից, 1982 թվականի № № Ա-ից, Գ-ից, Ժ—ԺԲ-ից և 1983 թվականի № № Բ—Գ-ից և Է—Ը-ից:

Թ. 69ա.—Քրիստոնեայ քարոզչին ճշմարիտ ըմբռնումը:

Թ. 70ա.—Ընդհանուր սահման քրիստոնեայ քարոզչին:

Թ. 72ա.—Գլուխ Դ—Ճշգրիտ դիրքը եկեղեցւոյ պաշտօնէին:

Թ. 76ա.—Կիրարկում նախորդ հատուածին և վերջ հերձուածի խնդրոյն:

Թ. 84ա.—Գլուխ Զ—Հեթանոս դատարաններ դիմելու հարց (երրորդ խնդիր):

Թ. 86ա.—I—Դատ՝ հեթանոս դատարաններու առջև:

Թ. 91ա.—II, Պոռնկութեան հարցը նկատի առնելուած նախորդ սկզբունքներու լոյսին ներքև:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 2ա.— Ա. Տետրակ

Մեկնութիւն
առ
Կորնթացիս
Առաջին
Թուղթին

8—10—(19) 39:

№ 577
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿՈՐՆԹԱՑԻՈՑ
ԱՌԱՋԻՆ ԹՂԹԻՆ
(Բ. տետրակ)

Թերթերը՝ 100:— **Պրակները՝** 7, յուրաքանչյուրը 14-ական թերթից, բացի՝ Զ, որ 16 թերթից է բաղկացած:— **Մեծությունը՝** 21.2×16.4×1 սմ.:— **Նյութը՝** հաստ թուղթ:— **Կազմը՝** սև թղթակազմ բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական հասարակ բաց կապտավուն թուղթ:— **Վիճակը՝** լավ: —**Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** բոլոր թղթերի կոնակի մասը դատարկ է, բացի 100բ էջից:— **Տողերը՝** 19:— **Գծումները՝** թուղթըն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Շնորհք վարդապետ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Կ. Պոլսի հայոց Պատրիարք):— **Ժամանակը՝** շատ հավանաբար 1939 թ., նախորդի (№ 576) նման:— **Վայրը՝** Երուսաղեմ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.—Ս. Պօղոսի թուղթերուն վաւերականութ (իւն) ը:

Թ. 9ա.—Կորնթոս:

Թ. 16ա.—Կացութիւնը Կորնթոսի մէջ Ս. Պօղոսի մեկնումէն վերջ:

Թ. 23ա.—Կորնթական թուղթեր:

Թ. 37ա.—Դէպքերու շարունակութիւնը վերջին թուղթի առաքումէն յետոյ:

Թ. 40ա.—Հաւատոստութիւն Կորնթոսի Եկեղեցիին հետ կապ ունեցող դէպքերու, իրենց հաւանական թուականներով:

Թ. 42ա.—Մեկնութիւն:

Թ. 42բ.—Ծրագիր մեկնութեան:

Թ. 43ա.—Ա. Նախաբան:

I. Առաքելական՝ ողջոյն:

Թ. 54ա.—II. Գոհաբանութիւն:

Թ. 59ա.—II. Աստուծոյ փրկելու մեթոտը:

Թ. 64ա.—III. Կիրարկում վերև արտահայտուած գաղափարներու:

Թ. 72ա.—Շինողք:

Թ. 75ա.—Տաճարք:

Թ. 77ա.—Ապդ՝ ընդդէմ հովուական պաշտօնի լոկ մարդկայնօրէն գնահատումին:

Թ. 82ա.—Բ. հարց—Պոռնկութեան դեպք մը:

Գլուխ Ե:

Թ. 94ա.—Բ. մաս:

Թ. 95ա.—I. Ամուսնութիւն և յարակից հարցեր:

I. Կուսութիւն և ամուսնութիւն:

Թ. 97ա.—2. Ցանձնարարութիւնք ամուրեաց և այրեաց:

Թ. 98ա.—3. Ցանձնարարութիւնք՝ հեթանոս լծակից ունեցող քրիստոնէից:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 2ա.— Բ. Տետրակ

Մեկնութիւն
առ
Կորնթացիս
Առաջին
Թուղթին:

№ 578
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿՈՐՆԹԱՑԻՈՑ
ԱՌԱՋԻՆ ԹՂԹԻՆ
(Գ. տետրակ)

Թերթերը՝ 95:— **Պրակները՝** 6, յուրաքանչյուրը 16-ական թերթից, բացի Գ պրակը, որ 15 թերթ է:— **Մեծությունը՝** 20.6×15.8×0.9 սմ.:— **Նյութը՝** միջակ թուղթ:— **Կազմը՝** սև թղթակազմ բարակ ստվարաթուղթ, որի կոնակի վրա ոսկեգույնով գրված է անգլերեն «Beyt-ul-Makdes Library»: Նույնի թարգմանությունը գրված է նաև արաբերենով: Այս երկու տող գրության վերևում ճնշումով նկարված է ոսկեգույն Օմարի մզկիթը:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական բարակ սպիտակ թուղթ:— **Վիճակը՝** բավարար:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 60ա—95բ, ինչպես նաև նախորդ բոլոր թղթերի կոնակի մասը դատարկ է:— **Տողերը՝** 20:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Շնորհք վարդապետ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Կ. Պոլսի հայոց Պատրիարք):— **Ժամանակը՝** շատ հավանաբար 1939 թ., նախորդ երկուսի (№ № 576 և 577) նման:— **Վայրը՝** Երուսաղեմ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 2ա.—Գլուխ Է:

Թ. 6ա.—Կուսանաց խնդիր:

Թ. 9ա.—Գլուխ ԺԱ:

Ա. Կուսանց սքողման հարց:

Թ. 15ա.—Հոգևոր շնորհաց գործածութեան մասին:

Թ. 32ա.—Գլուխ ԺԳ:

Բ. Սիրոյ փառաւոր յատկանիշերը:

Թ. 44ա.—ԺԵ Գլուխ:

Թ. 46ա.—Ա. Քսի Յարութիւնը հաստատուած պատմական ապացոյցներով:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 1ա.— Մեկնութիւն առ Կորնթացիս Ա. Թուղթին (շար. Է. 21):

№ 579

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿՈՐՆԹԱՑԻՈՑ

Թերթերը՝ 32:— **Պրակները՝** 1:— **Մեծությունը՝** 20.8×15.9×0.2 սմ.:— **Նյութը՝** բարակ թուղթ:— **Կազմը՝** սև թղթակազմ բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** չունի:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** ձեռագրի բոլոր թղթերի կենակը դատարկ է, ինչպես նաև 10ա թերթը:— **Տողերը՝** 18:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Շնորհք վարդապետ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Կ. Պոլսի հայոց Պատրիարք):— **Ժամանակը՝** շատ հավանաբար 1939 թ., նախորդ երեքի (№ № 576—578) նման:—**Վայրը՝** Երուսաղեմ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 1ա.— (Շար. Է. 36):

Թ. 4ա.—Այրեաց վերամուսնութեան հարց (39—40):

Թ. 6ա.—Գլուխ Թ:

Թ. 17ա.—Գլուխ Ժ. 14—33:

Թ. 24ա.—Գլուխ ԺԱ:

Թ. 29ա.—Գլուխ ԺԳ:

(Ձեռագրում կա նաև անջատ երեք թերթ թուղթ, որոնց վրա գրված են հետևյալ վերնագրերը)

Ներածություն Ա. և Բ. Թեսաղոնիկեցւոց թուղթերուն:

Ա. Թեսաղոնիկէ:

Բ. Պողոս Առաքեալի գործունէութիւնը ի Թէսաղոնիկէ:

Բ. Թէսաղոնիկէցիս:

Ա. Գլուխ:

Բ—Գ—Դ—Ե:

№ 580

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԿԱԹՈՂԻԿԷ ԹՂԹԵՐԻ

Թերթերը՝ 84:— **Պրակները՝** 6:— **Մեծությունը՝** 21.1×16.8×0.9 սմ.:— **Նյութը՝** հաստ թուղթ:— **Կազմը՝** սև լաթակազմ բարակ ստվարաթուղթ:— **Պահպանակները՝** սկզբում և վերջում մեկական կապտավուն թուղթ:— **Վիճակը՝** լավ:— **Գրությունը՝** միասյուն:— **Դատարկ թղթերը՝** 1ա, 81ա—84բ, ինչպես նաև ձեռագրի բոլոր թղթերի կենակը դատարկ է, բացի 75բ—80բ թերթերից:— **Տողերը՝** 19:— **Գծումները՝** թուղթն ինքնին գծավոր է:— **Գիրը՝** շղագիր:— **Զարդագրություն՝** չունի:— **Գրիչը՝** Շնորհք վարդապետ (այժմ Տ. Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյան, Կ. Պոլսի հայոց Պատրիարք):— **Ժամանակը՝** 9 հոկտեմբերի 1939 թ.:— **Վայրը՝** Երուսաղեմ:— **Ծանոթագրություն՝** ձեռագիրն ստացված է Նոր Վեհարանի գրադարանից 17 նոյեմբերի 1982 թ.:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Թ. 3ա.—Գլուխ Ա:

Համառօտ տեսութիւն մը Կաթողիկէ թուղթերու մասին:

Թ. 22ա.—Բ. Մաս—Մեկնութիւն:

Թ. 23ա.—Գլուխ Ա.—Համառօտութիւն:

1. Նամակագրական ողջոյն:

Թ. 27ա.—Ա. Ինչ ինչ կրօնական ճշմարտութեանց մասին:

Թ. 30ա.—Անդրադարձ ակնարկ:

Թ. 37ա.—Անդրադարձ ակնարկ:

Թ. 49ա.—Գլուխ Բ. (շար.):

Թ. 51ա.—Գլուխ Գ. (շար.):

Թ. 56ա.—Գլուխ Դ:

Թ. 64ա.—Մեկնութիւն Պետրոսի Առաջին թուղթին: Գլուխ Ա:

Թ. 71ա.—Ներածութիւն թղթոյն Բ. Պետրոսի:

Թ. 74ա.—Ներածութիւն թղթոյն Յուդայի:

Թ. 75ա.—Կանոնականութիւն:

Թ. 75բ.—Յայտնութիւն Յովհաննու, ներածութիւն:

Թ. 80ա.—Հեղինակը:

ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Թ. 2ա.— Ա. Տեարակ Մեկնութիւն Կաթողիկէ Թուղթերուն 9—10—(19) 39:

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կազմի առաջին երեսին կպցված մի փոքր սլիտակի վրա գրված է)

Ս. Գրոց մեկնութիւն:

(Շարունակելի)